



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18939

500

891.99

45-31

1890



W: 13.356

891.542-3

4-31

ԼԱԼՈ

1382

Թիֆլիս

1890

891.542-3

Կ - 31

Մ

Ա. ՓԱՓԱԶԵԱՆՑ

1179
d

ԼԱԼՈ

4383

ԹԻՒՐՑԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Խ ջայ Պատրիք ուստի
մանակ ք թուրցի
առաջար դրա պահ
ու մայա թեր դաշտության
տիւրց, յ 182 թ. 1912 թ.

0.25

1

3



ԹԻՒՐՑԵՐԻ ԱՐԴՅՈՒՆ
ՀՊՀ ՊՐՈՐ Տ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ք-Ն վկան և պահապես գողության տակ էնթական

1890

2003

ԳՅԱՅԱՎԱՐ

Օ Լ Ո Ւ

ՑԱՅՐԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Дозволено цензуром, Тифлисъ, 1890 г. 23-го февраля

Тип. „Арори“ Т. Я. Назарьяна уюл. Головин. пр. и Европ. ул.

Հայոցական դժմունի տրոքարած թիրու չեն պայման թևազառ
դաշտարար այսուհետքն չեն պայման թևազառ միան գիտան
չեն ուն ։ Խովանակար ոչիա ուղարկութիւն պայման չեն պայման
ուն ունակութիւն մայուրյան ամսմուն ։ Եւսի ու ուղարկութիւն
և այ բոլոր մե ամսարդարութիւն ուն բանակ մըսան ։ Այս այս
այս հիմ ձեռքուն խովանակ այս այս զնուրքուն լար ու ։ Եւս
ուն ուն ։ Եւս ուն
ԱՌԱՋԱՐԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս ուն ուն ։ Եւս ուն ։
Ժողովրդական ընթերցանութեան գրքեր մեսք շատ քիչ ուսինք.
Խակ է ժանակ ի ի՞ն այսինքն գնի կողմից ամենքին մատչելի ժողովրդա-
կան գրքեր, համարեա թէ բոլորին չուսինք։ Մենք քիչ ուսինք նոյն-
պէս եւ մանկական լաւ գրքեր։

Դա մեր ժամանակակից զրականութեան ամենախոշոր պակասու-
թիւնն է, ամենախոշոր պակասութիւն ենք ասում, որովհետեւ մենք
անհերքելի ճշմարտութիւն ենք համարում այն միտքը, թէ ժողովր-
դութիւն պէտք է կարդայ, եւ թէ գրականութեան պարտաւո-
րութիւնն է ընթերցանութեան գրքեր մատակարարել այդ ժողովրդին։

Ժողովրդական ընթերցանութիւնն ունի գեղեցիկ նպատակներ—
լայսացնել ժողովրդի հասկացութիւնների հորիզոնը, սովորեցնել ամբո-
խին քննելու իր կենաքի բոլոր երեսոյների պատճառները, արմատա-
խիլ անել ժողովրդի միջից այն սովորութիւնը, որով նա ամեն մի գըժ-
քաղղութիւն ընդունում է իբրև ճակատագրական մի անխուսափելի
չարեք, —ըստայ նրա առաջ ընութեան բոլոր գաղտնիքները, ծանօթացնել
նրան բուսական եւ կենդանական աշխարհի հետ, հաղորդել
ժողովրդին բնական գիտութիւնների տարեքը, որպէսզի նա իմանայ, թէ
ինչ է այն լոյսը, որ մարդուն կենդանութիւն է տալիս, ինչ է այն
հողը, որ կերակրում է ամենքին, ինչ է այն օդը, որ շունչ է տա-
լիս ամեն մի արարածի. ծանօթացնել ժողովրդին օտար երկների
քաղաքակրթութեան հետ, հասկացնել թէ ինչ է ալշատան քը,

տարածել ժողովրդի մէջ ուղիղ հասկացողութիւններ հասարակական կեանքի մասին, տարածել ամբոխի մէջ մարդասիրական գաղափարներ, սովորեցնել ժողովրդին ոգեւորվելու բարձր գաղափարներով,—աչա այս նպատակը, որ պէտք է ունենայ ժողովրդական ընթերցանութիւնը:

Միեւնոյն ժամանակ դա ժողովրդական գրքերի մի պը օգը ամ
է, եւ այդ պրօգրամը իրագործելու նպատակով՝ ժողովրդի ընթերցա-
նութեան համար հրատարակվող մեր գրքերը պէտք է լինին I. Վիպա-
կան, II. Գիտնական, III. Կենսագործական եւ IV. Պատ-
մական - աշխարհ հագուստական:

Եթէ այդ բովանդակութեան համապատասխանող ժողովրդական գրքերի լեզուն կը լինի պարզ ու հասկանալի, եւ գիւնն էլ ամենքին մատչելի, այն ժամանակ նրանք կժամանցին ժողովրդի բոլոր խաւերը, եւ մեծ յաջողութեամբ կը ճառայեն իրանց նպատակին:

10. uguslbp

1890 թ. փետրվար,

Թիֆլս:

Երբ Վանի Ալգեստանից դէպի քաղաք տանող ճանապարհը չէր շինված, Հայկավանք եկեղեցու ճիշտ դէմ ու դէմը՝ Օմար Էֆէնդու մեծ արտի եզրքում մի փոքրիկ խրճիթ կար կանգնած, որի դուռը պատսպարված էր միայն մի կիսաւեր կարճ պատով։ Խրճիթի աջ կողքին ըոլորովին դատարկ արտն էր գտնվում, որ և փոփում էր նրա ետևում։ Ճախ կողքին կանգնած կար իր նման մի խրճիթ, առջևն էլ մի փոքրիկ հրապարակ։ ալդտեղից հոսում էր և մի ջրաշատ առուակ, որ պտոյտ գործելով եկեղեցու առջևից՝ գնում թափվում էր ծովը։

Խըճիթը բաղկացած էր միայն մի փոքրիկ մոլխ
սենեակից, որին հազիւ հազ լուսաւորում էր կտուրից
բաց արած մի երթիկ. առաստաղի գերանները թունիրի
ծուխից մի փայլուն սեռթիւն էին ստացել. սև էին նաև
պատերը. իսկ յատակը թողած էր այն գրութեամբ,
ինչպէս որ եղել էր խրճիթը շինելուց առաջ. միայն մի

քանի գզզած փսիաթներ կային փռված թոնիրի շուրջը, և նստոտած խաղում էին երեք՝ միմեանցից մի տառվ մեծ մանուկներ:

Խրճիթի անկիւններից մինում մի կապուտաչեալ հասակաւոր կին մի քանի կապոցներ էր տեղաւորում ցորենի տոպլակի վրա, իսկ խրճիթի դռան մօտ, չոր գետնի վրա նստած ծխում էր մի մուշտակաւոր մարդ:

Մարդ ու կնիկ էին գրանք. իրանց որդիների հետ Կ. Պօլսից էին եկել և հազիւ մի քանի ժամ կը լինէր որ մտել էին Վան, գտել իրանց միակ խրճիթը, ուր և տեղաւորվում էին:

Մարդը մի երկարահասակ, թուխ, առողջ դէմքով, կը լին խուզած մուրուքով, սուր երկար բեխերով թիկնաւկոր խուզած մուրուքով, սուր երկար բեխերով թիկնաւկոր խուզած մի վետ անձն էր. նրա ամբողջ հագուստը գլխին դրած մի կեղտոտ ֆէս, մի շապիկ և մի մուշտակ էր, մի հին, մաշված մուշտակ, որով եւ աշխատում էր փաթաւ թել իր մերկ մարմինը. Ոտներն առանց գուլպալի պատերը մի էր կապուտած էին մի զորդ ամենահասարակ եւ ամառապարագած էին մի զորդ ամենահասարակ եւ ամառապարագած էր մի զորդ:

Կնիկը կապուտաչեալ, սպիտակ, գեղեցիկ դէմքով, նուրբ գծագրութիւններով, բազմաթիւ նեղութիւններից առաջացած մի քանի մելամաղձոտ խորշումներով ՅՈ-ամեայ Պօլսեցի կին էր, որին հաւանել էր Կ. Պօլսում եղած ժամանակ և իրան կին էր առել Վանեցի Աւետիսը, որ ժամանակ և իրան կին էր առել Վանեցի Աւետիսը, որ կը կար տարիներ այստեղ իր անգութ բաղդի հետ կոռե-

լուց յետոյ յետ էր դառնում դէպի հայրենիք աւելի խեղճ, աւելի աղքատ, քան թէ էր իր հայրենիքում եղած ժամանակ: Աւետիսը մի կերպով Տրապիզոն էր հասել, ուր վոքք ինչ փող հաւաքելով հասել էր Երզրում. այստեղ էլ մի քիչ հաւաքելով իրան ձգել էր Վան և Եկել ընկել իր խարխուլ խրճիթի մէջ, բոլորովին ապաւինելով Սստոծոյ գթութեանը, որից նա զուրկ էր մնացել տասներեք տարիներից ի վեր:

Նա ունէր երեք որդի. Երկուսը տղայ և մէկը աղջիկ, համարեա մերկ, առանց գուլպաների, առանց կօշիկների, առանց գոնէ մի տաք պահող պատուած հագուստի... Նրանց մայրը իր հին չթէ արջազգեստից յաջողել էր կարել մի մի հատ շապկանման հագուստ: Երեկոյ էր Երբ Աւտոն իր ընտանիքի հետ քաջաք մտաւ, իր խրճիթը իջաւ, մօտիկ դրայիներից մի քանի կտոր փայտ առնելով թոնիրը վառել տուաւ և իր միակ շապիկը, որ երկար ճանապարհ գնալուց կեղտումիել էր, տուաւ իր կնոջը լուալու. իսկ ինքը հազնելով մերկ մարմնի վրա իր հին մուշտակը, նստել էր խրճիթի դռան և ծխում էր և մտածում:

Մտածում, էր որ թէւ ոչինչ չոնի, թէւ չզիտէ թէ էգուց ինչ պիտի ուտեն ինքը և ընտանիքը, սակայն ունի գոնէ մի անկիւն, որ իր սեփականն է և ուր կարող է քնել գիշերը... իսկ միւս օրը նա կերթալ քաղաք... մշակութիւն կանէ—նոր շինվող ճանապարհի վրա կաշտէ. բայց ոչ... չէ որ այնտեղ աշխատողները ձրի են

1. Փայտոնկ կաշիից կարած շատ հժանագիա կօշիկ է:

աշխատում, մինչեւ իսկ մի փսքը հաց չեն ստանում . . .
Հոգ չե . . . կերթայ Այգեստան: Լսել էր, որ անտեղ
հարուստ աղաները տներ են շինում . . . Ուժեղ է, մշա-
կութիւն կանէ, հող կըկրէ . . . և թող օրավարձը լինի նոյն
իսկ 40 փարալ . . . հաց կըգնէ . . . գոնէ ցամաք հաց. սական
ունի մի անկիւն, մի բուն, որ կարող է նա իր սեփականը
համարել և բնակվիլ այնտեղ առանց փարձ վճարելու:

Ինչպէս Վանեցի, նա ևս ատում էր փարձւոր լինելը:
Եւ նա ծխելով ներս նայեց իր ունեցածի վրա:

Այնտեղ խրճիթում կալին միայն մի տոպրակ՝ ճանա-
պարհին հայ գիւղերից ժողոված ցորեն, նրա վրա երկու-
երեք նիհար կապոցներ, գետնի վրա փոված մի քանի
հատ փսխաթներ, մի վտիտ դօշէկ, մի կեղտոտ շալէ վեր-
մակ, անկիւնում դրած մի ջրի կեղտոտ կուժ, մի փոք-
րիկ կաթսալ, մի թիթեղեալ թէլաման, և դրանով վեր-
ջանում էր Աւետիսի տան կահ-կարլասիքը . . . Դրա վրա
պէտք է աւելացնել նաև մի նիհար կատու, որ ծուլութեամբ
նստել էր թոնիրի տաք շրթունքի վրա ու ննջում էր:

Այդ երեկոյ գեռ հաց չէին կերել և չունէին էլ
ուտելու. դրացիներից մէկը խոստացել էր կերակուր ու-
ղարկել, որին և սպասում էին. . . Իսկ էգուց, Աստուած
ողորմած էր, ի հարկէ Աւետիսը մշակութիւն կանէր և
մի կտոր հաց կըճարը . . .

Երկարատև էր եղել այդ թշուառ կեանքը, ուստի
և փարժվել էր դրան:

վեճման ամ ժամանակը մայզ նայդա ովք ու չի
ովք ելարձաւ առ
և յառաւ նայան կը դրիման թու ու նորիամ մօրի Ս.

Օսմանեան կառավարութիւնը Զայերից զինուորական
տուրքը ժողովելու համար իւրաքանչիւր թաղից ընտրում է
մի խիստ և գործունեալ մարդ և նրան է յանձնում ալդ
տուրքերի ժողովելը, ընկերացնելով նրա հետ նաև մի
հասարակ զինուոր, որպէսզի պէտք եղած ժամանակ, չը
տուողին կարողանայ բանտարկել, ծեծել և կամ նրա
կալքը գրաւել:

Հայկավանից թաղը ևս ունէր իր հաւաքողը—մի
կարձահասակ դաժան անձը, որ միշտ զինուորի հետ, քօ-
չա ն ն ե լ ի¹ տետրակը ձեռքին՝ տնից տուն էր գնում և
ժողովում տուրքերը: Ալդ բանի համար նա շատ նա-
խանձախնդիր էր, ոչ մի օր ուշացնել չեր կամենում.
Խլում էր, եթէ ունէին, բանտարկում ծեծում, և կամ
իր զինուորի ձեռքը տալով խոնաւ ա մ բ ա ր ն ե ր ն² էր
ուղարկում նրան, ով որ մի օր ժամանակ էր ուզում
վճարելու: Նախանձախնդիր էր, որովհետեւ իւրաքանչիւր
նիւֆիւսից³ 2 զուրուշ շահ ունէր նա:

Բէրբէրենց Սրգօ էր կոչվում նա և ամբողջ 20 տա-
րի էր, որ միայն այդ պաշտօնովն էր ապրում. ունէր
եռայարկ մեծ տներ, մեծ ալգիներ և նոյն իսկ խանութներ:

1) Տուրքերի ստագիրներ. 2) մի տեսակ անրբաւառը
են, ովք բանտարկեալի թողառում են առանց ժամկոցի, անօթի և
թագ գետմի վրա. 3) ամձական տուրք:

Ոչ ոք չէր սիրում նրան, որովհետեւ նա ամենքի հետ անդուժ էր:

Սրգօն բնակվում էր Ա. Յակոբի թաղում, ուստի և միւս օրը առաւտեան միայն լսեց, որ Հայկավանցի Ոսպնէսպասենց Աւտօն Կ. Պօլսից եկել է:

Իսկոյն զինուորը հետն առաւ, թևի տակը դրեց քօշանների տետրակլը և ուրախ-ուրախ գնաց դէպի Հայկավանք:

Ճանապարհին նա մտածում էր, թէ 13 անգամ 37-ը քանի է. և երբ եկեղեցու առաջևն էր հասել՝ ուրախութեամբ գտաւ, որ 13 անգամ 37 դուրուշը անում է 481 դուրուշի մի մեծ գումար:

Չեռքերն սկսեց շինուածութիւնից, որովհետև այդ փողը նա մի ժամից յետոյ կարող էր գրպանումը այնենալ: Կառավարութիւնն այդ գումարը իրաւունք չունեցաւ, որովհետև Սրգօն արդէն 12 տարի առաջ յայտնել էր, որ Ոսպնէսպասենց Աւտօն մեռել է:

Իսկ այժմ Աւտօն իր ճանկն էր ընկել և ինչպէս կարելի էր բաց թողնել նրան առանց զինուորական տուրքն առնելու . . . 481 դուրուշ, դա մի մեծ գումար է առնելու . . . 200 կամաց կամացը կամացը . . . չէ որ 200 Վանի Համար. իսկ հողալին համրկը . . . չէ որ 700 դուրուշ—7 ոսկի, այսինքն 35 հատ արծաթ մեծ մէջիդիէներ. և եթէ Աւտօն այդ փողը 2 դուրուշնոց արծաթ գրամներով տար... օ՛հ, այն ժամանակ Բէրբէրենց Սրգօն գրպանում կունենար 350 հատ կրոբիկ, սիրուն ու փայլուն գրամներ . . .

Ս.յակէս մտածելով, Սրգօն փոքրիկ կամաւրջից անցաւ և Աւտօնի խրճիթի առջև կանգ առաւ, Այստեղ բագում խաղում էին երեք մանուկ:

Սրգօն ուրախութիւնից քիչ մնաց թուշէր, որովհետև տեսաւ, որ Աւտօն երեք որդի ունի, ուրեմն և մի կին... Զէ որս չորս անձի մի տապրան տուրքն անում է 148 դուրուշ, . . . Ս.յակէս պէտք էր հաշվել ուրեմն շուրջ 848, այսինքն մօտ 1000 դուրուշ պիտի մտնէր իր գրպանը:

Փոքր ինչ առաջ անցաւ, զլուխը ներս կոխեց խըրդի դռնից և գոչեց.

—Աւտօն, հէ Աւտօն . . .

Աւտօն, որ նստել էր իր կնոջ հետ թոնիրի վրա և ոտները ներս կախած տաքանում էր, ոտքի ելաւ և խրճիթից դուրս եկաւ:

—Ա՛յ բարի ես եկել, Աւտօն, գոչեց ծիծաղելով Սրգօն,—էնչալէս ես. լաւ ծերացել ես . . . կմիկ էլ ունիս, այ ինչ սիրուն որդիներ ես ունցել. ինձ չես ճանաչում:

Աւտօն, որ գուշակել էր արդէն ամեն ինչ, գունաթափ ետ-ետ քաշվեց և կմկմաց,

—Ճանաչում եմ . . .

—Տնաքանդ, այդպէս կը հանդիպեն բարեկամին... բայց, հոդ չէ, Պօլսում ես մեծացել . . . էլ ինչ լայեղ կանես մեզ նման խեղճ մարդկանց հետ խօսելու . . . Ա՛յ, բօլ փարաւ էլ բերած կը լինա. որ Պօլս գնացողը փարաւ չի բերել... Նա, չես կարող մեր հին հաշիւները մաքրել:

Աւտօն պատի գոյն էր ստացել, երերում էր և կոժնել էր դռանը ցած ջնկնելու համար: Խրճիթի ներսից երեսում էր նրա կնոջ տիտուր և բուսահատ դէմքը:

—Ի՞նչ հաշիւ, կմկմալով հարցրեց Աւտօն:

—Է՛, հանաք ես անում, ժպտաց Սրգօն. նիւֆիւսի փողը չես լիշում. իմ հոգիս հանեցին. ախալէր, տասներեք տարի էլ նիւֆիւս չտալ կըլինք: Ասենք մի մեծ փող էլ չի, մէկ 500 զուրուշի չափէ . . . Պօլսում մի օր քէֆի համար ծախսելու փող. ներս գնանք, ներս գնանք քօշաններդ տամ:

Եւ մի քայլ արաւ ներս գնալու, բայց Աւտօն անշարժ կանգնել էր շէմքի վրա: —Վայ, գոյեց Սրգօն, —ինձ ներս էլ չես ընդունում . . . այ, շատ ես մեծացել հա: Բայց հոգ չէ մեր հաշիւը վերջացրու գնանք. չմոռանամ որ մօտ 500 զուրուշ էլ տան տուրքիցն է մնացել . . . լուսամ որ այն էլ կըտաս:

Աւտօն չէր պատասխանում, իսկ մանուկները գետնի վրա փոված՝ դիտում էին այդ տեսարանը:

—Է՛, ինչ ես ապուշի պէս կանգնել. վերջացրու, գոյեց Սրգօն փոքր ինչ կոպտութեամբ. դեռ ևս քեզ պէս քանիսները կան. հոգիս գուրս է գալիս ձանգալով: Նուտ արա:

—Ես . . . ես . . . կմկմաց Աւտօն փոքր ինչ ուշիք գալով, —ես ոչինչ, ոչինչ չունիմ տալու . . .

—Ոչինչ . . . Հա, Հա, Հա . . . Ծօ, ումն ես խարում, խօ հօրդ տղան չեմ, հօ խելքս հաց ու պանիրի հետ չեմ

կերել. մարդ 13 տարի Պօլիս մնայ, յետոյ ետ դառնայ ու ասի ոչինչ չունիմ . . . Բայց ինձ ինչ ես իմը կառնեմ, ախալէր. ունիս թէ չունիս, ինձ համար միւնոյն է. դու գիտես որ առանց նիւֆիւս եւ տուրք տալու չէ կարելի... Եթէ որ ոչինչ չունէիր, ինչու եկար, հազր քեզ մեռած էի գրել, ել ուր եկար. դէհ, շնոտ արա:

—Սաացի որ ոչինչ չունիմ, խօսեց Աւտօն դողդոցիւն ձայնով: Կուզես ներս մտիր և տես: . . . Բայց Սրգօն արդէն սկզբից, երբ գլուխը խրճիթի դռնից ներս էր կոխել, ամեն ինչ տեսել էր, ուստի և ասաց.

—Ախալէր, ես ինչ գործ ունիմ քո տանդ մէջ լինի յինի, ինձ ինչ. ես իմ նիւֆիւսը կառնեմ: —Ա՛յ, վրա բերեց նա տետրակը բանալով, այստեղ է բոլոր քօշանները. դու լաւ գիտես որ ես այստեղ մի շահ չունիմ, բայց ն ի զ ա մ ը¹ ախալէս է, ինչ անեմ: Եթէ չառնեմ, հոգիս կըհաննեն, ինչ որ ունիմ-չունիմ, ձեռքիցս կառնեն: Ախալէր, թէ չունիս, հապա ինչ անենք:

Աւտօն մի բուռն ձիգ գործեց, մի քայլ առաջ եկաւ և ասաց.

—Սրգօ, ինչու ես երկարացնում, ոչինչ չունիմ տալու. ժողովարարութեամբ եմ եկել տեղ հասել. թող գնամ մշակութիւն անեմ ընտանիքիս այս օրուայ հացը ճարելու համար . . . ինչ որ կուզես, արա . . . բանտ էլ տանիս ինձ, այդտեղ ոչ գու և ոչ կառավարութիւնն օգուտ ունի, որովհետեւ ուտելու հացս պիտի տայ

1. Օրէնքը:

և քնելու անկտինս առաջ Ահա, ունեցածս այս խրճիթն
է, կուզեսախիթը ունառէ . . . և առաջ առաջ առաջ
եւ ստութեամբ մի քանի քայլ դէպի փողոցը
քայլեց, լետոյ ետ դարձաւ, պահ մի մանուկներին նայեց,
պահ մէլ խրճիթի դռան մութ անկիւնում լուռութեամբ
արտասվող կնոշ, և դառնութեամբ աւելացրեց.
—Հանգիստ թողէք մեղ . . . զնացէք խրճիթս ծա-
խեցէք . . . և աւ, զաւ, հեգնութեամբ ժպտաց Մրգօն խրճիթը
դիտելով, —խրճիթդ առւրքը կըհանէ. էլ ինչու ես նեղա-
նում, դու դիտես որ իմ ձեռքիցս եկածը չեմ ինակիլ...
Մնաս բարով, ախպէր, Աստուած գործիդ լաջողութիւն
տայ. դու էլ խեղճ ես. ախ, ախակէս սիրտս ալրվում
է. . . բայց ձեռքիցս ինչ կըզայ:
եւ դէմքի մի ծամածութիւն գործելով, ձկոյթովը
սրբեց աչքի երևակայական արտասուքը, լետոյ կուանա-
լով գգուեց մանուկներից մէկին ու ժպտալով դուրս
զնաց:

Երբ կամուրջիցը անցնում էր, կանգ առաւ, դար-
ձաւ կամուրջի ծալրին կանգնած Աւտօին և ասաց.
—Եզուց տունդ կըծախիփ . . . մի լուսահատիփը,
Աստուած ողորմտծ է. հա, այս էլ իմացիր, որ եթէ տու-
նըդ 10 ոսկուց աւելիսվ ծախվեց, միամիտ կաց, մնա-
ցածը քեզ կըհասցնեմ:

եւ հեռացաւ խորամանկ ժպիտը դէմքին:

Իսկ Աւտօն ապուշի պէս փոքր ինչ կամուրջի ծալրում
կանգնած դիտեց հեռացող հարկանի անձնութիւնը և առաջ

քայլ արաւ դէպի արտը, դառնալով նայեց իր արտասվող
կնոջը, որ այժմ շէմքի վրա կանգնած՝ գոգնոցով ծածկել
էր դէմքը, փոքր ինչ էլ գետնի վրա թաւալող մանուկ-
ներին նայեց և կամուրջից անցնելով ծանր, ապուշի
քայլերով սկսեց դէպի Ալգեստան գնալ:

Ամեն ինչ մտածել էր խեղճը, բայց իր խրճիթը
կորցնելը՝ ոչ ուստի և Կամարով աղբիւրի մօտ հասնելու
ժամանակ հազիւ ուշքի գալով թօթափեց իրան և մըր-
մնջաց.—Աստուած ողորմած է:

Երբ հասաւ նէմէն աղալի տան դռան առջեն, ար-
դէն բոլորովին ուշքի էր եկել, միայն իր փոքր ինչ հարթ
դէմքի վրայ գոյացել էր մի տխուր խորշոմ և նրա բե-
րանը մըմնջում էր.

—Աստուած . . . Աստուած . . .

Աղաջանք էր թէ բողոք:

ուստի այս աշխարհ անուն ունի ան-
ուստի անուն ունի անուն ունի անուն ունի ան-

ուստի անուն ունի անուն ունի անուն ունի ան-
ուստի անուն ունի անուն ունի անուն ունի ան-

բախտուս ով. պիտի խոյսուր, քոյս դուք այս պաց
ըմբած խոյսուր՝ ճամբանդ այս հանձն ներս զա, զում
ու ունան խոյսուր այս մեջու չէ չմէ որով, զանձն ով
դայս ու ունան խոյսուր սկզբանեամ և սկզբան սկզբան:

Սառերի տակից, վճիտ ջրով առուակների եղերք-
ներից քայլերով, Աւտօն հասաւ Խաչ փողոցի փոքրիկ հրա-
սպարակը, ուր կանգ առաւ մի խանութի առջև, փոքր ինչ
չորս կողմը նախեց և երբ ուղեց ծռվել դէպի Արարուց
փողոցը, ձախ կողմի մի փառաւոր տան դռան մօտ տեսաւ
մի միջահասակ մարդ, որ փաշայի մի աստիճանանաւորի
հետ կանգնած՝ խօսակցում էր:

Այդ տան մէջ նստում էր Խալիլ փաշան և դռան
առջև կանգնած անձը կարապետ աղան էր:

Սա մի միջահասակ անձն էր, ճպուտ-ցաւադար փոք-
րիկ աչքերով, խոշոր գլխով, կարճ իրանով և երկար ոտ-
ներով. դէմքն ուռած, մորուքը սափրած, ընչացքը կարճ ու
թանձր և քիթը փոքրիկ. Հագել էր եւրոպական հագուստ,
սակայն մահուդէ շալվարն այնչափ կարճ էր, որ երե-
ւում էին նրա մերկ սրունգները և այդ մերկ սրունգների
հետ եւրոպական հնամաշ փոշոտ կօշիկները, գլխին՝ եղերք-
ները իւղոտ ու սեացած, փիւսկիւլը կտրտված և գըզ-
գըզված ֆէսը, Փէսի առջեւից գուրս ցցված մի փունջ
խորի մագերը,—այդ բոլորը տեսնողի ծիծաղը կարող
էր շարժել:

Բայց ով կըհամարձակվէր ծիծաղել կարապետ աղայի
վրա, որի տան մէջ նստում էր փաշան, որ քաղաքա-

կան ժողովի անդամ էր, թաղական խորհրդի ատենապետ
էր, զինուորներին վառելիք մատակարարողն էր . . .
Եփէնդութեան աստիճան ստացած, երկրորդ կարգի մէ-
ջիտիէի պատուանշանի արժանացած, պաշտօնական օրե-
րում հագնում էր իր փառաւորապէս ասղնեգործած
նշանագետնոր, նոյն խակ արդարութեան ատենի անդամ,
սիրելի փաշաներին . . . մի խօսքով մի երևելի մարդ,
որից շատերը կան Թիւրքա-Հայաստանում:

Եւ Աւտօն Խաչ փողոցից դէպի Արարք գնալու ժա-
մանակ տեսաւ նրան, ճանաչեց, գողաց ու շտապեց շուտ
անցնել, որովհետև լիշեց որ 13 տարի առաջ նրանից 2
ոսկի պարտք էր առել:

Բայց Կարապետ աղան նկատեց նրան, ուստի և
խոյն թողեց իր խօսակցին, ժպիտը դէմքին մի քանի
քայլ յառաջացաւ և ասաց.

—Ա՛յ բարով, Աւտօն, այդ դու ես. մօտ արի տես-
նենք: Ե՞րբ եկար, ո՞չափի ծերացել ես . . . Հըմ, պան-
դիտութիւն, տունդ քանդվի, ինչպէս ծերացնում ես
մարդուն . . .

Եւ ձախ ձեռքում բռնած 15 խոշոր հատերից բաղ-
կացած մեղիւսիկը դարձնելով մատների մէջ՝ մի քայլ էլ
յառաջացաւ:

Աւտօն ստիպվեցաւ մօտ գնալու, Փէսը հանեց գըլ-
խից և մի խոր բարով տուաւ նրան աշխատելով միւսոյն
ժամանակ իր բաց կուրծքը միակ մուշտակովը ծածկելու:

—Ե՛, ասա տեսնենք, ժպիտը երեսին նորից խօսեց
կարապետ աղան,—ի՞նչպէս ես. Ե՞րբ ես եկել:

—Երեկ եմ եկել, աղա՛:

—Ծօ, ուր մնացիր այսափ տարի. կարծեցի թէ,
մեղալ, մեղալ . . . մեռել էլր . . . ինչեցիէ, փառք
Աստուծոյ, որ ողջ ես. պսակված ես:

—Հրամանք ես, աղա՛:

—Տեսնում էք այս տղային, ծիծաղեց կարասկետ

աղան, —կինդ պօլսեցի՞ է:

—Հրամանք ես, աղա՛:

—Սիրուն կըլինի . . . պօլսեցիք սիրուն են միշտ.
որդիներ էլ ունիս:

—Հրամանք ես, երեք հատ:

—Զօ, ինչ շատ . . . Աստուծած էլ տալ . . . է,
ասա տեսնենք . . . հա՛ . . . այժմ ուր ես գնում:

—Արարք, աղա՛:

—Հա . . . բան-ման առնելու. լաւ. որտեղ ես
իջել: Իրաւ, ծօ, մոռացայ որ տուն ունիս . . . երբ
տանը կըլինիս, զամ կինդ ու որդիներդ տեսնեմ. բոլորը
խօ առողջ են. խեղճ մարդ, որչափ փոխվել ես . . .
հէլ դիւնիա՝, տունդ քանդվի: Քանի՞ տարի է, որ
գնացել ես:

—Տասներեք տարի է, աղա՛:

—Հէլ դիւնիա, տունդ քանդվի. կարծես երեկ էր . . .
է՛, Պոլիս զատ-մատ² աշխատեցի՞ր . . . աղո՞ր թէ³ մո-
ռացայ հարցնելու. մեր Մարկոս աղին տեսալ ալստեղ:

—Հրամանք ես, աղա՛:

1. Աշխարհ. 2. բան-ման. 3. ձշմարխ:

—Ո՞ղջ էր, առողջ էր:

—Նատ լաւ էր, աղա՛:

—Աստուծած քեզ էլ կեանք, առողջութիւն տալ:

—Աստուծած կեանք տալ . . .

—Է՛, ասա՞ է . . . խօ լաւ ես. դէհ, բայց ալժմ
գուցէ գործ ունիս . . . գնա՛, գնա՛, երեկոյեան ես կըգամ
ձեր տուն:

Եւ դէմքը դարձնելով՝ Խաչ փողոցից դէպի վեր եկող
մի աստիճանաւորի գիմաւորեց, մի կողմը քաշվելով՝ ձեռ-
քը մինչև գետին պարզեց և չետու մինչև գլուխը տանե-
լով թէ մէն դէ՛ արեց և նրան ընկերանալով՝ հեռացաւ:

Իսկ Աւտօն պահ մի նրա ետևից նախեց, յետոյ
գլուխը կուրծքի վրա կախեց և համը քայլերով դէպի
Արարք գնաց:

Երբ Զաղի փողոցի ծալից անցնելով մօտենում էր
Արարուց Հրապարակին՝ նկատեց որ փողոցի աջ կողմում
մի նոր տուն է շինվում. մշակները հող, ցեխ, քար
են կըում:

—Ինձ էլ գործ չէ լինի այստեղ, մտածեց նա և մի
երկար փայտ ձեռքը բռնած վերակացուին մօտեցաւ:

Վերակացուն Աւտօնի մուշտակը տէսնելով (մուշտակը
թէկ հին էր, բայց հարուստներն իսկ հին մուշտակ են
հազնում և կարկատած հագուստներ), ետ-ետ հաշվեցաւ
և բարեեց:

Աւտօն կարմրեց, բայց մի ճիգ գործեց և հարցըեց.

1. Տաճկական բարեւ:

—Ինձ էլ մի գործ կըտաք այստեղ:

Վերակցուն մի քաղ յառաջ եկաւ, զարմացած չափեց նրան ոտից մինչև գլուխ և հեգնութեամբ ասաց.

—Դու, աղա, ուզում ես սարիկութիւն¹ անել:

—Այն:

—Այդ մուշտակովի:

Աւտօն մուշտակի քղանցքը բաց արաւ և մերկ մարմինը ցոյց տուեց լուութեամբ: —Վերակցուն մի քրքիջ արձակեց, որ տեսց երկու րոպէ, իւտով լրջացաւ և ասաց ծիծաղելով.

—Մենք էլ հենց մշակ էինք փնտրում. այ, հող կրիր, մինչեւ երեկոյ 100 փարայ կըստանաս:

—Նորհակալ եմ:

—Նոյնպէս կէսօրուալ հացդ:

—Աւելի շորհակալ եմ:

—Բայց մուշտակդ չի խանգարիլ գործիդ:

—Կրժողովիմ քղանցքը:

—Դէհ, հարդէ. ահա, առ այս ամանը և հող կրիր:

Աւտօն փոքր ինչ զուարթացաւ. —100 փարայ պիտի տանէր տուն. իսկ կէսօրուայ հացից կէսը կուտէր և կէսը կըպահէր ու կէսօրին տուն կըտանէր ընտանիքի համար... Մի չուանի կտոր գտաւ, մուշտակի քղանցքը ետ ժողովելով գունդ արաւ մէջքի վրա, կապեց և ամանն առնելով սկսեց աշխատել:

Կէսօրին մօտ արդէն յոգնել էր. դեռ խամ էր:

1. Օրականով բանոյ մշակութիւն:

—Հոգ չէ, մտածում էր նա շարունակ աշխատելով, կըվարժվիմ: Կէսօրին երբ հաց ու ժաժիկը¹ բաժանեցին, նա իրաւունք խնդրեց կէս ժամով տուն գնալու և հաց ուտելու. յետոյ մուշտակի քղանցքը արձակեց, հացի մէջ փաթաթեց, ժաժիկը դրաւ կընատակին և արագ քայլերով դէպի տուն գնաց:

Ուրախ էր և մինչև իսկ շատ ուրախ, որովհետեւ հաց էր տանում տուն . . .

ՀՅԾԿ

1. Մօջալ:



Տան ըազը մտնելիս մանուկներին չտեսաւ:
—Ներսն են, մտածեց նա. այ կուրախանան հացը
տեսնելով...

Եւ ներս մտաւ, բայց շեմքի վրա զարմացած կանդաւ:

Այստեղ, խրճիթում, ցորենի տոպրակի վրա նստել էր Կարապետ աղան և մեղեսիկի հատերն էր դարձնում. կինը մի անկիւն քաշվել, մանուկներին շուրջը ժողոված և անոնել էր և դոգում, իսկ կատուն մրաւում էր:

—Այս մուր մնացիք, Աւտօ, գոչեց Կարապետ աղան.
մի ժամ է սպասում եմ քեզ:

Նրա ձայնը առաւտօտեան նման քաղցր չէր ալ ևս, մինչև իսկ փոքր ինչ խիստ էր, գեմքը ալ ևս չէր ժպտում, ալ սառն էր:

—Ներեցէք, աղջ, թոթովիկ Աւտօն. բանում էին:
—Բանում էիր... ուրեմն ճիշտ է, որ ոչինչ չունիս,
գոչեց նա ոտքի ելնելով. յետոյ չորս կողմը նայեց, դէմքը
ծռմռկեց, անկիւնում գողացող կնոջը նայեց և Աւտօնին
գառնայով՝ կոտութեամբ ասաց.

—Աւտո, մեր հին հաշիւը վերջացնե՞ս:
Աւտօն դողաց, բայց իրան չկորցըց, որովհետեւ
արդէն սպասում էր այդ հարուածին:

— Փամաննակ տուր, աղա, ասաց նա դողդոջիւն ձալ-նով, կաշխատեմ կրտամ. ինքդ տեսնում ես, որ ոչինչ չունիմ:

— Հայ, հայլ... գոչեց Կարապետ աղան. Էլ ժամանակ տամ, արդէն տասներեք տարի է, տասը անդամ խնդիրք եմ տուել, որ չկորչի փողս¹. և մինչեւ Երբ պիտի կարողանաս մշակութիւնով 10 ոսկին վճարել:

—Հըմ, ծիծաղեց Կարապետ աղան. ուրեմն ես ախ-
մախ եմ, յիմար եմ որ երկու ոսկին առանց շահի թող-
նեմ քեզ վրա. չէ, ախաղեր, 4—5 ոսկի դատաստանական
ծախս եմ արել. տոկոսն էլ վրա եկ և տես, թէ 15
ոսկի կըլինք՝ թէ ոչ. բայց որովհետեւ խեղճ ես, տես-
նում եմ, ընտանիքի տէր ես,—ես էլ ընտանիք ունիմ,
որդիներ ունիմ, —խղճում եմ վրադ։ Տաս ոսկի տուր և
մուրհակդ ետ տամ։ Տեսնում ես որ Կարապետ աղան ան-
խիդ մարդ չէ, ոչ ոքի վատը չէ ուզում…

— Իրալց... թողժովեց Աւտոն: — ՏԵս, Աւտո, ընդհատեց Նրան Կարապետ աղան, ինձ մի բարկացնիր... ես մի քիչ շատ համբերող մարդ եմ... բայց գուշք էլ շատ անխիղճ էք. մէկ խղճմտանքիդ հարցրու, խեղճ չեմ ես, իմ 2 ոսկին գիտես ի՞նչ չարչարանքներով. . . ալ, այս ճակատի քրտինքովս եմ վաստակել. անխիղճ, մեղք չեմ, դու իինիս կանես այն,

1. Տաճկական մի օրէք է, որ 10 տարուց յետոյ ըրողոք վաճ պարտքը ոչնչացնած է համարվում:

ինչ որ ես եմ անում, արդէն 5 ոսկին քեզ բախշեցի.
Հայդէ: քանի որ կինդ լաց է լինում. . . խեղճ է, սի-
րուն աչքերը կըվնասվին՝ թող 2 ոսկին էլ նրա չարը տա-
նի. 8 ոսկի տուր և մուրհակդ քեզ տամ:

—Աղա, խօսեց Աւտօն, այժմ ես մի փարալ էլ չու-
նիմ. ժամանակ տուր, աշխատեմ տամ:

—Եշ մի խատնի, գարուն կըգալ քէ կորնգեան
կըբունինի¹, ժամաց Կարապետ աղան,—էլ համբերեմ,
հէր ի ֆ², որ մէկը տասներեք տարի կըհամբերի: Զէ,
ախպէր, չունիս, տունդ ծախիր տուր.

—Տունս ծախված է:

—Ծախված,—գոչեց Կարապետ աղան կատաղած, ար-
դէն ծախել ես, էլ սկի ինձ չես լիշել . . . այ, ախպէս էք
բոլորդ. լաւութիւն անեմ, փող տամ և այժմ . . . Ում
վրա ես ծախել:

—Կառապարութիւնը պիտի ծախէ նիւֆիւսի համար:

—Հա, Սրգօն է. ապա ես ինչ անեմ հիմա:
Տեսնում էք, հէնց միշտ գոռում էք, որ մենք ձեզ
նեղացնում ենք. ախպէր, փող ես առել, ետ տուր՝
չնեղացնենք. դու լինէիր, ինչ կանէիր. ախմախը ես եմ
որ ձեզ նման մարդոց փող եմ տալիս: Զէ, Աւտօ, որտե-
ղից որ լինի գտիր տուր. Աստուած գիտէ, լիտոյ չասես
թէ Կարապետ աղան վատ մարդ էր. բանտ ձգել կըտամ
քեզ. . . դու գիտես:

Եւ մի քայլ արաւ դէպի դուռը:

1. Էշ մի՛ սատիին, գարումը կըգայ, բնզ համար ուօջան կը-
րուսմի. (Ժողովր. առած է). 2. մարդ:

—Աղմ, գոչեց Աւտօն, բանտ ձգել տալով ինչ շահ
կունենաս, հացս էլ պէտքէ դու տաս:

—Հա. . . տեսնում էք, հէնց այդպէս էք մտա-
ծում, որ չէք ուզում պարտքը տալ. մտածում էք, թէ
ինչ կայ, բանտ ձգել կըտալ, հացս էլ կըտալ, ընտանիքս
էլ կըպահի . . . Աղպէս դիտես, էլ չգիտես որ Կարա-
պետ աղան քեզ մի կտոր հաց էլ չի տալ բանտի մէջ...
Հըմ, շատերն այդպէս ասացին, բայց վերջը իրատվեցան,
երբ քաղցած մնացին: Ախպէր, թէ մարդ ես, թէ
խիղճ ունիս, թէ հայ քրիստոնալ ես, արի ինձ մեղ-
քի մէջ մի դցիր, մի ստիպիլ որ քեզ բանտը գցել տամ,
յետոյ ընտանիքդ դունէդուռն ընկնի: Քար-ճար արա ու
փողս տուր:

—Ի՞նչ անեմ, աղա, գոչեց արտասուալից ձայ-
նով Աւտօն, որ չունիմ, որտեղից տամ. ահա, վիզս
կտրի առ:

—Աստուած չանի, ասաց Կարապետ աղան, ինչու
վիզդ կտրեմ. Հըմ, որ գու պարտքդ ճանաչող մարդ
լինիս, խիղճ ունենաս, ամեն բան կըծախես կըտաս . . .
Լսում ես, ամեն բան:

—Ի՞նչ ծախեմ, աղա. բոլոր ունեցածս իսկի տասը
դուրուշ էլ չարժէ:

—Դիտեմ, գիտեմ, բայց ասում եմ էլի . . . որ պա-
տուաւոր մարդ լինիս, ամեն բան . . . Հըմ, ճշմա-
րիտ . . . Ես որ լինէի, կինս էլ կըծախէի:

Աւտօն սաստիկ գունաթափված՝ ետ-ետ քաշեց.
Կինը մի ճիչ արձակեց, երեխաները սկսեցին լալ:

—ի՞նչ, ի՞նչ, գոչեց Աւտօն մի քայլ դեպի Կարապետ աղան ցատկելով, ինչ ասացի՞ր . . .
—Հը՛, ի՞նչ է, գոչեց բարկութեամբ աղան. քէֆի՞դ դիպաւ. ՚իհարկէ ալդպէս է: Գիտես ինչ բան է պատիւր . . . Բայց քեզ նման մարդն ի՞նչ գիտէ, ինչ է պատիւր:

—Կինս ծախեմ, գոչեց Աւտօն կատաղած, —դու համարձակվեցի՞ր ասելու . . .

—Սրան է . . . սրան է, —քրքիջ արձակեց աղան: Զօ՛, ում վրա ես գոռում. ով է առջևդ կանգնած, ճանաչնում ես ինձ. Ճօ՛, հոգիդ կրհանեմ է . . . Զէ՞ որ բանտի մէջ կրփտեցնեմ քեզ . . . Տես գեռ ինձ հայհոյում է . . . Նուն, ախմախ, էշ . . .

Եւ իրար ետևից մի կոյտ հայհոյանքներ թափեց Աւտօնի գլխին: Աւտօն ընկճվեց, լիշեց էր դրութիւնը ուստի ժողովեց իրան և ասաց.

—Ների՞ր, աղա, ես ով եմ որ քո դէմ խօսեմ . . . հայհոյի՞ր, կինս էլ առ, ով է ինձ լսողը . . . Իրաւունքը քոնն է:

—Հը՛մ, ալդպէս, ասաց հապարտութեամբ աղան, ալդպէս խելօքացիր: Ես գնում եմ, էգուց կրգամ, փողս պատրաստ լինի:

—Աղա . . .

—Չախդ . . . էգուց փողս պատրաստիր:

—Ո՞րտեղից պատրաստեմ:

—Որտեղից կուգես . . . շան որդիներ, —ասաց նա դեպի դուռը քայլելով, —կատղում են երեղոր փաղդ ես ու-

գում . . . շան որդիներ . . . գիտէք ով է Կարապետ աղան:

Դուրս գնաց, բագի մէջ կանգնած ետ նայեց՝
—Էգուց փողս պատրաստիր թէ չէ . . . գոռաց
և հեռացաւ կրկնելով.

—Նան որդիներ . . . Արի այսպիսիներին փող
տուր:

Երբ աղան դուրս գնաց, Աւտօն գնաց ընկաւ
տոսլրակի վրա, գլուխը ձեռքերի մէջ առաւ և սկսեց
արտասպել: Կինն ես մի անկիւնում լոռութեամբ ար-
տասպում էր. արտասունքն էր նրանց միակ զէնքը . . .

—Ախ, Աւտօն, մըմնցեց կինը, ինչու դու ալդպէս
խեղճ ես, տեսար ինչեր ասաց . . .

—Ե՛հ, կնիկ, ասաց դառնութեամբ Աւտօն, կասի
էլ, կըմարսի էլ. աղքատին վկայութիւն է պէտք իր
ասածը հաստատելու համար . . . Վերցրէք ալդ հացը
կերէք. իսկ ես գնում եմ սշխատելու:

Աչքերը սրբեց և դուրս գնաց:

Աւտօլի մերկութիւնն ու մի շաբաթ էլ չոր հաց մատակարարել նրա ընտանիքին:

Հաւաքած փողը տարան տուին Աւտօլին:

Աւտօն առաւ, արտասվեց և նոյն իսկ շնորհակալութիւն լաւտնելու ոյժ չունեցաւ:

Խնդրեց իր գրացիներից մէկին, որ կէսօրից լետոյ զնայ իր համար մի ձերք հագուստ առնի, զատեց մի կողմը դրաւ 80 զուրուշ և մնացեալը մի շորի մէջ փաթաթած՝ յանձնեց կնոջը:

Ապա սկսեց մտածել, թէ Աստուած ողորմած է:

Փոքը ինչ հաց գնեցին, կինը թոնիրը վառեց, վռոշեից և երբ նրանք նստել հաց էին ուտում, յանկարծ խրճիթի գուռը բացվեց և դռան շէմքի վրա երևեցան Կարապետ աղան և մի զինուոր:

Աւտօն սարսափեց. զգաց որ մի վատ բան պիտի լինի:

—Ասքեար աղա, դարձաւ աղան զինուորին, —ահա մարդն է:

Զինուորը մօտեցաւ Աւտօլին, դէմքը խոժոռեց և գոչեց.

—Վէր կաց գնանք:

—Ուր, հարցրեց Աւտօն գողդոջիւն ձայնով:

—Բանտը:

—Բանտը, ի՞նչու:

—Այս աղայի պարտքը չուզու համար:

—Բայց... թոթովեց Աւտօն ապշած, —չէ որ մուշտակս էլ իւլեց առաւ... էլ ի՞նչ է ուզում այդ անաստուածը...

—Տեսնում էք, գուաց Կարապետ աղան... Դէ, արի լաւութիւն արա. տեսնում էք ինչպէս զրպարտութիւններ

—ու ամսայամ 2. ին գլուխ . . . զմայր մաշ . . . նորա

նորա ու ծուրանք ջնի պատ շամաք ուրաւ
առաւ . . . 3. ին պատաստ որու քարք:

Այս դէպքերից մի շաբաթ լետոյ, Համավանից եկեղեցում, մի կիւրակի օր, երբ պատարագը պիտի սկսէր, Տէր-Ծուըէնը երեսը ժողովրդեան դարձրեց և ասաց.

—Սիրելի ժողովուրդ, մեր թաղի մէջ կ. Պոլսից դարձած մի նոր պանդուխտ խիստ նեղութեան մէջ է իր կնոջ և որդիների հետ. նա անօթի, օրուայ հացի կարօտ է . . . դիմում է ձեզ օգնութիւն խնդրելու, որպէսզի իր մերկ մարմինը ծածկէ և կարողանայ գնալ աշխատելու: Այժմ Յակովը էֆէնտին մի թաս կրպտեցնէ, յանուն ամենողորմ Աստուծոյ, շնորհեցէք ձեր ողորմութիւնները:

Այս, Աւտօն մնացել էր մերկ, որովհետեւ Կարապետ աղան չկարողանալով համոզել նրան, որ իր կինը ծախէ, խլել էր նրա վրայի միակ մուշտակը, ուստի և Աւտօն մերկ՝ նստել էր տանը:

Դրացիները մի քանի օր կերակուր և հաց ուզարկեցին, լետոյ դիմեցին թաղի մէջ յայտնի մի անձի և խնդրեցին, որ Աւտօլի մերկ մարմինը ծածկելու համար եկեղեցու մէջ մի գանձանակ պտըտեցնեն:

Երբ ժամերգութիւնը վերջացել էր, Աւտօլի համար ժողովուրդը, այն էլ միայն խեղճ ժողովուրդը, հաւաքել էր 100 զուրուշի մի զումար, որով կարելի էր ծածկել

Է անում: Ա՛յ մարդ, ով առաւ քո մուշտակը. գժվել ես:

Աւտօն վեր թռաւ տեղիցը և գոչեց.

—Ո՛չ, չեմ գժվել, բայց պիտի գժվեմ . . .

—Բոնիր, հրամանց աղան, ուզում է մարդ խաբել: Եւ որովհետեւ լսել էր, որ Աւտօնի համար փող է հաւաքվել՝ աւելացրեց.

—Դեռ ևս ինձ խաբում էր թէ փող չունի... անիրաւ, անխիղճ, հիմա որ փնտրել տամ, փող չժգտնվիլ մօտդ:

—Աստուծոյ սիրուն, գոչեց կինը առաջ գալով—խղճացեք: Անիրաւ մարդ, գոչեց նա պօլսական ամենամաքուր տաճկերէնով՝ դիմելով աղալին — հինգ օր առաջ չէր որ այս խեղճի մուշտակը խլեցիր պարտքիդ փոխարէն:

—Լսիր, ալ կին, խօսեց աղան,—նախ ես, լիմար չեմ, որ 10 ոսկի առնելիքիս փոխարէն մի Յ ոսկի չարժող մուշտակ առնեմ, և երկրորդ, ով է վկադ, որ մուշտակը ես վերցրի . . . Ահա ձեր մուրհակը... Երևի ծախել էք մուշտակը. լաւ . . . Զինունք, գարձաւ նա զինուորին,—քեզ հրամաված է փնտրել սրա տունը, գտած փողը առնել և իրան էլ բանար տանել. դու գիտես, կուզես պարտքդ մի կատարիլ:

Ասաց և ետ քաշվեցաւ:

Զինուորը կոպտութեամբ ոկտեց փնտրել. գտած փողը ժպտալով ցոյց տուաւ աղալին, յետոյ գըպանը դրաւ և Աւտօնի թեկիցը բռնելով՝ գոչեց.

—Նալդէ, խարերալ, գնանք բանտը:

Աւտօն էլ չհակառակեց, առանց նախելու որ մերկ էր, առանց ուշադրութիւն գարձնելու կնոջ և երեխա-

ների արձակած աղիողորմ ճիշերին, առաջ ընկաւ և գնաց:

Աւտօնին տարան բանտ:

Դրացիները միւս օրը իմացան ալդ գժեաղգութիւնը և իրանց տուն տարան Աւտօնի կնոջ ու որդիներին:

Տունն արդէն ծախված էր:

Դրանից մի ամիս յետոյ Վանի փողոցներում լայտնվեցաւ մի բարձրահասակ անձ, պատուտած սպիտակ շապիկ հագին, բաց կուրծքով, գգգղված մազերով, գունաթափ դէմքով և իր շուրջը անհանգստութեամբ նայող աչքերով:

Նա ուղղակի մտաւ Խաչ փողոցը և սկսած Կարապետ աղալի տնից մինչև Զաղի փողոցի ծալը վազելով անցաւ, յետոյ գարձաւ և նստեց Կարապետ աղալի գունից փոքր ինչ հեռու գտնվող աղբիւրի մօտ, ջուր խմեց և սկսեց անցուգարձ անողներին նախել:

Ալդ օրուանից ալդ մարդը միշտ ալդպիսի դրութեան մէջ՝ անդադար կանոնաւոր քաղցերով Կարապետ աղալի տնից մինչև Զաղի փողոցի ծալը և այնտեղից մինչև Կարապետ աղալի տունը քաղցում է, քթի տակից երգեր մումուլով, անցնողների երեսին ծիծաղելով, երեմն բռունցքով երկնքին սպառնալով և երեմն գոների մօտ կանչնած հաց խնդրելով . . .

Խօսելիս, նա անդադար լալո¹ բառն է կըկնում, ուստի և ժողովուրդը նրա անունը դրաւ ծուռ լալո² . . .

1. Երեսի այդ բառը ծագել է բրդական „լո-ն“ բացականութիւններից. 2. յենթ նաև:

Է անում: Ա՛ յ մարդ, ով առաւ քո մուշտակը. գժվել ես:

Աւտօն վեր թռաւ տեղիցը և գոչեց.

—Ոչ, չեմ գժվել, բայց պիտի գժվեմ . . .

—Բոնիր, հրամայեց աղան, ուզում է մարդ խարել: Եւ որովհետեւ լսել էր, որ Աւտօնի համար փող է հաւաքվել՝ աւելացրեց.

—Դեռ ևս ինձ խաբում էր թէ փող չունի... անիրաւ, անխիղճ, հիմա որ փնտրել տամ, փող չթագումիլ մօտդ:

—Աստուծոյ սիրուն, գոչեց կինը առաջ գալով—խղճացէք: Անիրաւ մարդ, գոչեց նա պօլսական ամենամաքուր տաճկերէնով՝ դիմելով աղային — հինգ օր առաջ չէր որ այս խեղճի մուշտակը խլեցիր պարտքիդ փոխարէն:

—Լսիր, այ կին, խօսեց աղան,—նախ ես, լիմար չեմ, որ 10 ոսկի առնելիքիս փոխարէն մի Յ ոսկի չարժող մուշտակ առնեմ, և երկրորդ, ով է վկադ, որ մուշտակը ես վերցրի . . . Ահա ձեր մուրհակը... Երեկ ծախել էք մուշտակը. լաւ . . . Զինունը, դարձաւ նա զինուորին,—քեզ հրամայված է փնտրել սրա տունը, դտած փողը առնել և իրան էլ բանտը տանել. գու գիտես, կուզես պարտքդ մի կատարիլ:

Ասաց և ետ քաշվեցաւ:

Զինուորը կոստութեամբ սկսեց փնտրել. գտած փողը ժպտալով ցոյց տուաւ աղային, յետոյ զբանը դրաւ և Աւտօնի թեիցը բռնելով՝ գոչեց.

—Հայդէ, խարերայ, զնանք բանտը:

Աւտօն էլ չհակառակեց, առանց նայելու որ մերկ էր, առանց ուշադրութիւն դարձնելու կնոջ և երեխա-

ների արձակած աղիողորմ ճիշերին, առաջ ընկաւ և գնաց:

Աւտօնին տարան բանտ:

Դրացիները միւս օրը իմացան այդ գժբաղբութիւնը և երանց տուն տարան Աւտօնի կնոջ ու որդիներին:

Տունն արդէն ծախված էր:

Դրանից մի ամիս յետոյ Վանի փողոցներում յալտնվեցաւ մի բարձրահասակ անձ, պատուտած սպիտակ շապիկ հագին, բաց կուրծքով, գզզզված մազերով, գունաթափ դէմքով և իր շուրջը անհանգստութեամբ նայող աչքերով:

Նա ուղղակի մտաւ Խաչ փողոցը և սկսած Կարապետ աղայի տնից մինչև Զաղի փողոցի ծալը վազելով անցաւ, յետոյ դարձաւ և նստեց Կարապետ աղայի գունից փոքր ինչ հեռու գտնվող աղբիւրի մօտ, ջուր խմեց և սկսեց անցուգարձ անողներին նայել:

Այդ օրուանից այդ միջտ այդպիսի գրութեան մէջ՝ անդադար կանոնաւոր քայլերով Կարապետ աղայի տնից մինչև Զաղի փողոցի ծալը և այնտեղից մինչև Կարապետ աղայի տունը քայլում է, քթի տակից երգեր մումալով, անցնողների երեսին ծիծաղելով, երեւմն բուռնցքով երկնքին սպառնալով և երեւմն դռների մօտ կանցնած հաց խնդրելով . . .

Խօսելիս, նա անդադար լալո¹ բառն է կրկնում, ուստի և ժողովուրդը նրա անունը դրաւ ծուռ լալո² . . .

1. Երեւի այդ բառը ծագել է քրդական «լո՞-լո՞» բացականութիւններից. 2. Խենթ նալո:

իր քաղելու շրջանից նա դռւրս չէ գալիս, կանգ է առնում միմիայն Կարապետ աղայի տան դռան առջև և Զաղլի փողոցի ծայրում, յետոյ մի քրքիջ է արձակում և նորից վերագառնում:

Տարին մի անգամ, ամառը, Վանի սրիկաները ժողովելով, բռնում են Լալօյին, որ չէ ընդդիմանում, հանում են շորերը, Խաչ փողոցի առուակի մէջ մերկ նստեցնում, նաղարա զուրնան ածում և նրան սապոնով լողացնում:

Ժողովուրդը խուռն բազմութեամբ գալիս է հանդիսատես լինելու ալդ լուացման. յետոյ փող են հաւաքում և Լալօյի համար հագուստ առնում . . . Չեն մոռանում ալծի մազից քէ ազախիկը, որ Լալօն շատ է սիրում և վար նրան, ով կը համարձակվի նրա ալդ մուշտակին ձեռք տալ. նա կամ քարերով կը հալածէ նրան կամ բերանին եկած հալհոլանքը կատէ:

Ամեն մարդ պարտք է համարում փոքր ինչ նեղացնել Լալօյին և զուարճանալ: Նոյն իսկ Կարապետ աղան շատ անգամ իր դռան մօտ կանգնած՝ մեղեսիկը ձեռքին՝ մօտ է կանչում նրան, կատակներ է անում նրա հետ... ասում է, որ շուտով կամուսնացնէ նրան... Երբեմն էլ տասը փարալ է տալիս նրան և քրքիջներով ծիծաղում, երբ Լալօն առած փողը բերանն է զցում:

Ամեն մի վանեցի կամ Վանում եղողը՝ ճանաչում է Լալօյին:

Դա Աւտոն է . . .



ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ

18939

2073

